# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

*Սիրելի ուսանող,*

Բարի գալուստ Հայաստանի եվրոպական համալսարան:

Այս ուղեցույցը նախատեսված է քեզ համար, որպեսզի պատշաճ տեղեկացված լինես Համալսարանի գործունեությանը, տեսլականին, առաքելությանը, արժեքներին գերակա նպատակներին, քո իրավունքներին ու պարտականություններին, դառնաս մեր ակադեմիական համայնքի իրազեկ շահառու՝ մասնագիտական պարտքի գիտակցմամբ և բարձր պատասխանատվությամբ:

Ցանկանում ենք, որ մշտապես հիշես, որ ամուր պետականության և զարգացած հասարակարգի կարևոր առանցքը մոտիվացված և գիտելիքներով համալրված ուսանողն է, որն իր ստեղծարար մտածողությամբ և նորարար գաղափարներով կենսական շունչ է հաղորդում, դառնում հասարակության առաջընթացի կարևոր ազդակը:

Կրթված և որակապես պատրաստված ուսանողը հասարակության և մասնավորապես կրթական համակարգի հայելին է: Ուսանողակենտրոն մոտեցումը թույլ է տալիս, այս առումով առավել գնահատել և կարևորել ուսանողի կրթական պահանջմունքները և կարիքները:

Անկեղծ սրտով և աննկուն հավատով լիահույս ենք, որ միասին պատվաբեր և պատասխանատու կերպով պետք է ճանապարհ անցնենք դեպի բարձրագույն կրթության մակարդակ:

# STUDENT'S GUIDELINE OF EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA

*Dear student,*

Welcome to European University of Armenia.

This guideline is intended for you to be properly informed about the University's activities, vision, mission, core values, primary goals, your rights and responsibilities, to become an informed stakeholder of our academic community with an awareness of professional duty and high responsibility.

We want you to always remember that the important axis of a strong state and a developed social order is a motivated and knowledgeable student, who gives life with his/her creative thinking and innovative ideas, becomes an important impetus for the progress of society.

An educated and qualitatively prepared student is a mirror of society and particularly of the educational system. The student-centered approach allows, in this sense, to evaluate and emphasize the student's educational requirements and needs more.

With a sincere heart and faith, we are full of hope that together we must make our way to the level of higher education in an honorable and responsible manner.

Education is the anchor that conditions our life, becomes the pillar of our bright future. And so, let each of us become a torchbearer of creating our future and making new sense

Կրթությունը այն խարիսխն է, որը պայմանավորում է մեր կյանքը, դառնում մեր լուսավոր ապագայի կանթեղը: Եվ ուրեմն յուրաքանչյուրս դառնանք ջահակիր կրթության և գիտության միջոցով մեր ապագայի կերտման և նորովի իմաստավորման: Մեր օինակելի վարքով և արժեքանությամբ շարունակենք հավատարիմ մնալ մեր որդեգրած արժեքներին և լավագույն ավանդույթերին՝ հանուն մեր այսօրվա և վաղվա սերնդի բարոյական դաստիարակման, նրանց մասնագիտական կայացման և որակավորման: Ի վերջո հանուն մեր պետության և ազգի բարօրության և հարատևման:

*Միշտ հիշի՛ր, որ կրթությունը լույս է, իսկ կրթական գործընթացը լույսի փարածում:*

*Բարի երթ:*

## ՀԱՅԱՑՔ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

«Հայաստանի եվրոպական համալսարան» հիմնադրամը (նախկինում՝ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա) հիմնադրվել է 2001 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության և միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերի հիման վրա: Միջազգային առաջատար փորձի և տեղական կրթակարգի լավագույն ավանդույթների մեկտեղմամբ՝ Համալսարանում ներդրվեց ուսուցման արդի կառուցակարգ: Արդեն այսօր Համալսարանում առկա է ուսուցման եռաստիճան համակարգ՝ առկա և հեռակա կրթական ծրագրերով՝ նախատեսված ինչպես հայազգի այնպես էլ օտարերկրյա դիմորդների համար:

Հայաստանի եվրոպական համալսարանը իրականացնում է.

of it through education and science. With our exemplary behavior and values, let's continue to be faithful to our adopted values and best traditions for the sake of moral education of our today and tomorrow's generation, their professional development and qualification. After all, for the sake of the welfare and survival of our state and nation.

*Always remember that education is light, and the educational process is the spread of light.*

*Good luck.*

## A LOOK AT THE UNIVERSITY

The "European University of Armenia" Foundation (formerly called the European Educational Regional Academy) was founded in 2001 on the basis of agreements signed between the Government of the Republic of Armenia and a number of prestigious international organizations. By combining leading international experience and the best traditions of the local education system, a modern teaching structure was introduced at the University. Already today, the University has a three-level education system with full-time and part-time degree programs for both Armenian and foreign applicants.

The European University of Armenia implements:

- 16 bachelor degree programs,
- 15 master's degree programs,
- 3 PhD programs,

- 16 բակալավրի կրթական ծրագիր,
- 15 մագիստրոսի կրթական ծրագիր,
- 3 հետբուհական կրթական ծրագիր,

Համալսարանի գիտակրթական մասշտաբները չսահմանափակվեցին միայն քաղաք Երևանով, դրանք ընդգրկեցին նաև Հայաստանի մարզերը: Արդյունքում, համալսարանը հիմնեց մասնաճյուղեր Գյումրի, Վանաձոր, Իջևան և Կապան քաղաքներում՝ այդպիսով ընդարձակելով մրցունակ կրթության արտահանման ծավալները:

Առաջնորդվելով Հայաստանում կրթությունը գրավիչ և մրցունակ դարձնելու ընդգծված առաջնահերթությամբ՝ Համալսարանի համար գերակա դարձավ նաև արտաքին կապերի խորացումը և գործընկերային ցանցի ընդլյանումը: Բուհի միջազգայնացմանը, եվրոպական կրթական տարածքում նրա հեղինակության ամրապնդմանը մեծապես նպաստեց անդամագրումը բարձրագույն կրթական հաստատությունների եվրոպական ասոցիացիային՝ ԵՎՌԱՇԻՆ (EURASHE), որի անդամ Համալսարանը դարձավ 2018 թվականին:

Համալսարանի միջազգայնացման և գործընկերային կապերի խորացման առհավատչյան, բուհի ստեղծման օրվանից մի շարք արտասահմանյան բուհերի հետ ծավալվող հարաբերություններն էին և ձեռք բերված պայմանավորվածությունները՝ որոնց թվում կարելի է հիշատակել Իտալիայի Հանրապետության Բոլցանոյի «ԵՎՐԱԿ» («EURAC») գիտահետազոտական կենտրոնը, Լիոնի առևտրաարդյունաբերական պալատի «ԷԿԼԻԱ» («EKLYA») բիզնես դպրոցը և «ՀԻԲՐԻԱ» («HYBRIA») բիզնեսի և տեխնոլոգիաների ինստիտուտը, Իտալիայի

The scientific and educational scale of the University was not limited only to the city of Yerevan, it also covered the regions of Armenia. As a result, the University established branches in Gyumri, Vanadzor, Ijevan and Kapan, thus expanding the scope of competitive education exports.

Guided by the emphasized priority of making education in Armenia attractive and competitive, it became a priority for the University to deepen external relations and expand the partnership network. The internationalization of the University and the strengthening of its reputation in the European educational area were greatly facilitated by the membership in the European Association of Higher Education Institutions, EURASHE, of which the University became a member in 2018.

A believer in the internationalization of the University and the deepening of partnership relations, the relations and agreements reached with a number of foreign universities since the day of the University's establishment, among which we can mention the scientific research center "EURAC" of Bolzano, Republic of Italy, "EKLYA" of the Chamber of Commerce and Industry of Lyon ( "EKLYA") Business School and "HYBRIA" Institute of Business and Technology, "POLIARTE" Academy of Art and Design of the Republic of Italy, Chelsea Business School in England and other educational institutions. It is noteworthy that some of them are founders of the University and members of the Board of Trustees.

At the state level, the University also records significant achievements, signing bilateral agreements related to the

Հանրապետության «ՊՈԼԻԱՐՏԵ» արվեստի և դիզայնի ակադեմիան, Անգլիայի Չելսի բիզնես դպրոցը և այլ կրթական հաստատություններ: Հատկանշական է, որ նրանց մի մասը հանդիսանում են Համալսարանի հիմնադիրներ և Հոգաբարձուների խորհրդի անդամներ:

Ներպետական մակարդակում Համալսարանը ևս արձանագրում է նշանակալի ձեռքբերումներ, կնքելով երկկողմ պայմանագրեր, որոնք առնչվում են ուսումնական ենթակառուցվածքների զարգացմանը, պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստմանը, օտար լեզուների ուսուցմանը, ուսումնագիտական և մեթոդական ձեռնարկների հրատարակմանը, սեմինարների և գիտաժողովների անցկացմանը և բազմաթիվ այլ ձեռնարկումներին: Ահա դրանցից մեկը՝ Վիվասել-ՄՏՍ և Սինոփսիս Արմենիա առաջատար ընկերությունների միջև կնքված եռակողմ համաձայնությունը, որի շնորհիվ 2011 թվականին Համալսարանում բացվեց ժամանակակից կահավորմամբ, սարքային և ծրագրային ապահովման միջոցներով հագեցած «Միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգեր» ամբիոնը, որը ինքնատիպ էր մեր հայրենական կրթական միջավայրում:

2023-2024թթ. ուսումնական տարվանից սկսած բուհը իր բոլոր մասնագիտությունների գծով իրականացնում է լրացուցիչ միջազգային կրթական ծրագրեր, որի արդյունքում՝ մեր կողմից շնորհվում է *ակադեմիական կրթության պետական հավատարմագրված նմուշի դիպլոմ*, իսկ մեր գործընկերների կողմից *մասնագիտական կրթության դիպլոմ*, որը առավելապես հենվում է անձի հմտությունների և գործնական կարողությունների զարգացման և աշխատաշուկայի պահանջների վրա:

ՀՀ ԿԳՄՍ հավատարմագրման հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 24-ի N

development of educational infrastructures, training of lecturers, teaching of foreign languages, publication of educational and methodological manuals, holding of seminars and conferences and many other undertakings. Here is one of them, the tripartite agreement signed between the leading companies Vivacell-MTS and Synopsis Armenia, thanks to which in 2011, the "Microelectronic Circuits and Systems" chair, equipped with modern furniture, hardware and software, was opened at the University, which was unique in our domestic educational environment.

Starting from 2023-2024 academic year, the University implements additional international degree programs in all its specialties, as a result of which we award a state-accredited model diploma of *academic education and our partners award a diploma of professional education*, which is mainly based on the development of personal skills and practical abilities and the demands of the labor market.

According to the decision No. 55 of the RA ESCS Accreditation Commission of July 24, 2021, the University was awarded institutional accreditation for a period of 4 years (certificate No. 51).

Adopting the path of continuous improvement and development, the University continues its future-oriented activities in the ever-changing times of the educational world for the benefit of national education and the preservation of its best traditions.

55 որոշմամբ բուհին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով (վկայական N 51):

Որդեգրելով շարունակական բարելավման և զարգացման ուղին Համալսարանը կրթական աշխարհի հարափոփոխ ժամանակներում շարունակում է ապագային միտված իր գործունեությունը՝ ի շահ ներպետական կրթության և նրա լավագույն ավանդույթների պահպանման:

***Համալսարանի տեսլականն է՝***

Հայաստանի եվրոպական համալսարանի տեսլականն է ՀՀ-ում դառնալ ազգային և եվրոպական կրթական չափանիշներին և ուղենիշներին համապատասխան կրթական ծրագրեր իրականացնող, ուսանողակենտրոն, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստող, նորարարություններով, կրթական նոր տեխնոլոգիաներով և գիտության զարգացումներով առաջնորդվող, արդյունավետ և ճկուն կառավարվող, տարածաշրջանում ճանաչված, առաջատար բուհ:

***The vision of the University is:***

The vision of the European University of Armenia is to become a regionally recognized, leading University in Armenia that implements degree programs in accordance with national and European educational standards and guidelines, to be student-centered, to prepare specialists in accordance with labor market requirements, to be guided by innovations, new educational technologies and scientific developments, and to be efficiently and flexibly managed.

***Համալսարանի առաքելությունն է՝***

Եվրոպական կրթական լավագույն փորձի ներդրմամբ պատրաստել հումանիտար, հասարակագիտական և տեխնոլոգիական ուղղվածությամբ, հայաստանյան և միջազգային աշխատաշուկաների պահանջներին համապատասխան, մասնագիտական ժամանակակից գիտելիքներով, հետազոտական ու նորարարական հմտություններով ու կարողություններով օժտված, անգլերենով ազատ հաղորդակցվող, մրցունակ ու որակյալ մասնագետներ՝ նպաստելով մարդկային կապիտալի ձևավորմանը և պետության

**The mission of the University is:**

With the introduction of the best European educational experience, prepare humanitarian, social science and technological oriented professionals, in accordance with the requirements of Armenian and international labor markets, equipped with modern professional knowledge, research and innovative skills and abilities, fluent in English, competitive and qualified specialists, contributing to the formation of human capital and the socio-economic development of the state at national and international levels.

սոցիալ-տնտեսական զարգացմանը ազգային ու միջազգային մակարդակներում:

***Համալսարանի արժեքներն են՝***

1. Վստահություն,
2. Ստեղծարարություն և նորարարություն,
3. Հաշվետվողականություն և թափանցիկություն,
4. Սոցիալական պատասխանատվություն,
5. Գերազանցություն,
6. Համագործակցություն,
7. Փոխադարձ հարգանք, բարեկիրթություն և էթիկա:

**University values are:**

1. Trust,
2. Creativity and innovation,
3. Accountability and transparency,
4. Social responsibility,
5. Excellence,
6. Cooperation,
7. Mutual respect, courtesy and ethics.

***Համալսարանի գերակա նպատակներն են՝***

1. Կրթության որակի բարելավում և շնորհվող որակավորումների արժանահավատության ապահովում,
2. Գիտահետազոտական ներուժի զարգացում,
3. Արտաքին կապերի և միջազգային համագործակցության ընդլայնում,
4. Համալսարանի վարկանիշի բարձրացում,
5. Աշխատաշուկա-բուհ կապի ամրապնդում:

**The main goals of the University are:**

1. Improvement of the quality of education and ensuring the credibility of awarded qualifications,
2. Development of scientific research potential,
3. Expansion of foreign relations and international cooperation,
4. Increasing the ranking of the university,
5. Strengthening the labor market-university connection.

***Մեր մրցակցային առավելություններն են.***

- ***Պետական հավատարմագրում, պետական նմուշի դիպլոմ, կրթական ծարգրեր եվրոպական չափորոշիչներով:***
- ***Միջազգային սերտ գործընկերությունը և կապերը***: Համալսարանի կայուն առաջնահերթություններից է արտասահմանյան գործընկերների ցանկի ընդլայնումը, արտաքին կապերի

***Our competitive advantages are:***

- ***State accreditation, state model diploma, degree programs with European standards.***
- ***Close international partnerships and connections.*** Expanding the list of foreign partners and deepening external relations is one of the stable priorities of the University, which will make education at the University more attractive.

խորացումը, ինչը թույլ կտա կրթությունը Համալսարանում դարձնել ավելի գրավիչ:

- **Երկու դիպլոմի կրթական ծրագրեր** – Բակալավրի կրթական ծրագրում բուհը իրականացնում է երկու դիպլոմի ծրագիր: Դասընթացների 30-40 տոկոսը անցկացվում է եվրոպացի լավագույն մասնագետների միջոցով՝ առցանց եղանակով:
- **ՀԵՀ մասնաճյուղերը** – Գյումրի, Վանաձոր, Իջևան, Կապան քաղաքներում, որի նպատակը մարզերում և քաղաքներում կրթություն մատուցելն է, համայնքային ներդաշնակ զարգացում ապահովելը:
- **ՀԵՀ հարմարավետ շենքային պայմանները և ենթակառուցվածքները** – Բուհում վերջին տարիներին լայն թափ է առել շինարարությունը՝ ներքին վերազինման և կահավորման աշխատանքները: Համալսարանում սովորելը դարձել է ոչ միայն որակյալ, այլ նաև գրավիչ՝ իր հարմարավետ լսարաններով, դահլիճներով, կոնֆերանսի սրահներով: Բուհում գործում է փակ մարզադահլիճ, որտեղ իրականացվում են ուսումնական պարապմունքներ, սպորտային խաղեր և այլն: Գործում է նաև սննդի կետ՝ ճաշարան: Սրանից զատ բուհի ներսում կան հարմարավետ անկյուններ և բաց դասերի անցկացման ժամանակակից հարթակներ, որոնք բխում են ինտերակտիվ կրթության բոլոր պահանջներին: Ուսանողների համար հիանալի խթան է մոտիվացված սովորելու, կրթությունը և ուսանողական ժամանցը ներդաշնակ համատեղելու,

- **Two Diploma Education Programs** – In the undergraduate education program, the University conducts two diploma programs. 30-40 percent of the courses are conducted online by the best European specialists.
- **EUA branches** - in the cities of Gyumri, Vanadzor, Ijevan, Kapan, the purpose of which is to provide education in regions and cities, to ensure harmonious community development.
- **Comfortable building conditions and infrastructures of EUA** - In recent years, the construction, internal re-equipment and furnishing works have gained momentum in the University. Studying at the University has become not only high-quality, but also attractive with its comfortable classrooms, halls, conference halls. The university has an indoor gym, where training sessions, sports games, etc. are held. There is also a canteen. Apart from this, inside the University there are comfortable corners and modern platforms for holding open classes, which meet all the requirements of interactive education. It is a great incentive for students to be motivated to learn, to combine education and student entertainment in harmony, finally to study in safe and clean conditions.
- **Foreign professional consultants (Co-chairs)** are attached to the University chairs, who participate in the work of the educational and research fields of the chairs,

վերջապես անվտանգ և մաքուր պայմաններում ուսումնառելու:

- Համալսարանի ամբիոններին կից գործում են ***արտասահմանյան մասնագիտական խորհրդատուներ (Co-chair)***, որոնք մասնակցում են ամբիոնների ուսումնակրթական, գիտահետազոտական ոլորտների, կրթական բարեփոխումների աշխատանքներին, նպաստում են նպաստել ուսանողների մասնագիտական գիտելիքների, հմտությունների, կարողությունների զարգացմանը, աջակցում են Համալսարանի և օտարերկրյա բուհերի ու կազմակերպությունների գիտակրթական համագործակցությանը, Համալսարանի մրցակցությանը միջազգային ասպարեզում, միջազգային կապերի և գիտակրթական համագործակցության զարգացմանն ու դրանց ինտեգրմանը և այլն:
- ***Ուսանողների մենթորության ինստիտուտը***, որը կանոնավոր իրականացվող շարունակական գործընթաց է՝ ուղղորդելու և աջակցելու ուսանողներին իրենց ակադեմիական առաջընթացն ապահովելու և կրթական միջավայրին ինտեգրվելու հարցում: Ուսանողների մենթորության քաղաքականության առանցքային նպատակն է ուսանողներին տրամադրել ուսումնական գործընթացին առնչվող կազմակերպչական և մասնագիտական ուղղորդում ու աջակցություն:

educational reforms, contribute to the development of students' professional knowledge, skills, abilities, support the scientific and educational cooperation of the University and foreign universities and organizations, the University's competition in the international arena, the development of international relations and scientific-educational cooperation and their integration, etc.

- ***The Student Mentoring Institute***, which is a regular ongoing process to guide and support students in ensuring their academic progress and integration into the educational environment. The main goal of the student mentoring policy is to provide students with organizational and professional guidance and support related to the educational process.

*Այլ փվյալներ*

«Հայաստանի եվրոպական համալսարան» հիմնադրամ՝ գրանցման համար՝ 278.160.03103, գրանցման օր, ամիս, տարի՝ 17.10.2001թ., իրավաբանական անձի ծածկագիր 39008153, ՀՎՀՀ 00436097, հեռ. 011 24 01 36, 010 24 00 38, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դ. Անհաղթի 10, փոստային հասցե՝ 0014, էլ. հասցե info@eua.am, «Արարատբանկ» ԲԲԸ, h/h 1510008390100100,

***Other details:***

"European University of Armenia" Foundation: registration number: 278.160.03103, day, month, year of registration: 17.October,2001, legal entity code 39008153, ABXX 00436097, tel. 011 24 01 36, 010 24 00 38, address: RA, c. Yerevan, D. Anhaght 10, postal address: 0014, e-mail address info@eua.am, "Araratbank" OJSC, no. 1510008390100100,

## ՀԵՀ ԷԹԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

**ՀԵՀ-ում գործում են էթիկայի հետևյալ հիմնական սկզբունքները.**

1) ***Բարեվարքություն*** – վարքագծի համապատասխանեցում բարոյական նորմերին, վարվեցողության ընդունելի պահանջներին և չափանիշներին, ինչպես օրինակ՝ կարգապահությունը, ուղղամտությունը, զսպվածությունը, բարեկրթությունը, հետևողականությունը:
2) ***Ենթակարգություն*** – հարգանք վերադաս-ստորադաս հարաբերությունների աստիճանակարգության նկատմամբ, վերադասի հանձնարարությունների անվերապահ կատարում, բացառությամբ, եթե դրանք հակասում են ՀՀ օրենսդրությանը, ՀԵՀ կանոնադրությանը և ներքին իրավական ակտերի պահանջներին:
3) ***Արհեստավարժություն*** – մասնագիտական պատրաստվածություն, կոմպետենտություն, մասնագիտական

## THE BASIC PRINCIPLES OF ETHICS

**The following basic principles of ethics are applied in the EUA:**

1) **Good manners** - compliance of behavior with moral norms, acceptable requirements and standards of conduct, such as discipline, uprightness, restraint, politeness, consistency.

2) **Subordination** - respect for hierarchy of superior-subordinate relations, unconditional fulfillment of superior's orders, except if they contradict the RA legislation, the EUA Charter and the requirements of internal legal acts.

3) **Craftsmanship** – professional training, competence, continuous development of professional qualities and creative innovation.

4) **Responsibility and accountability** – awareness of the consequences of decision-making and actions, perception of professional and public duty, proper and accountable performance of authority.

5) **Academic freedom** – the opportunity to freely display creative abilities, promote professional choice and growth, freedom to use various academic sources and platforms.

որակների շարունակական զարգացում և ստեղծարար նորարարություն:

4) ***Պատասխանատվություն և հաշվետվողականություն*** – որոշումների կայացման և քայլերի ձեռնարկման հետևանքների գիտակցում, մասնագիտական և հանրային պարտքի ընկալում, լիազորությունների պատշաճ և հաշվետվողական կատարում:
5) **Ակադեմիական ազատություն** – ստեղծարար ունակությունների անկաշկանդ դրսևորման, մասնագիտական ընտրության և աճի խթանման հնարավորություն, ակադեմիական տարբեր աղբյուրներից և հարթակներից օգտվելու ազատություն:
6) ***Ակադեմիական ազնվություն*** – գիտության և կրթության բնագավառում հրաժարում գրագողությունից, խարդախությունից, կեղծիքից, ստախոսությունից, խաբեությունից, շողոքորթությունից, անարդար մրցակցությունից և այլ անազնիվ արարքներից:
7) ***Արդյունավետություն*** – ակադեմիական ռեսուրսների օպտիմալ, խնայողական և նպատակային բաշխում և օգտագործում:
8) ***Մասնավոր և կոլեկտիվ շահերի զուգակցում*** – անձնական շահերի և ակադեմիական համընդհանուր շահերի ներդաշնակ միասնություն: Մասնագիտական պարտականությունների կատարում՝ առաջնորդվելով ոչ միայն և անձնական, այլ նաև կոլեկտիվ շահերով: Շահերի բախման հնարավոր դեպքերից խուսափում, դրանց սահուն

6) **Academic integrity** – refraining from plagiarism, fraud, forgery, lying, deception, flattery, unfair competition and other dishonest acts in the field of science and education.
7) **Efficiency** – optimal, economical and targeted allocation and use of academic resources.
8) **Combination of private and collective interests** - harmonious unity of personal interests and academic universal interests. Performance of professional duties guided not only by personal but also collective interests. Avoidance of possible conflicts of interest, their smooth settlement. Predominance of collective interests in the case of a conflict between private and collective interests.
9) **Solidarity** – building relationships between University stakeholders based on the ideas of tolerance, mutual aid, humanity, cooperation, kindness, tact, inclusiveness, dignity, physical and mental integrity and respect for rights.
10) **Trust** - when building relationships, be guided by the assumption of mutual trust and mutual understanding.
11) **Publicity and transparency** - access and availability of information about the activities of the University, except in cases not provided for by RA legislation and the charter of the University.
12) **Fairness and proportionality** – proposing and implementing objective, unbiased approaches, balancing the steps taken and the expected goals.
13) **Equality** – non-discrimination, inclusiveness, equality in the academic community regardless of age, gender, disability, race, ethnicity, religion and creed.

կարգավորում: Մասնավոր և կոլեկտիվ շահերի բախման երկընտրանքի դեպքում կոլեկտիվ շահերի գերակայություն:

9) ***Համերաշխություն*** – բուհի շահառուների միջև հարաբերությունների կառուցում՝ հիմնված՝ հանդուրժողականության, փոխօգնության, մարդասիրության, համագործակցության, բարեկրթության, նրբանկատության, ներառականության, արժանապատվության, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության գաղափարների և իրավունքների հարգման վրա:

10) ***Վստահություն*** - փոխհարաբերությունները կառուցելիս առաջնորդվել միմյանց նկատմամբ վստահության և փոխըմբռնման կանխավարկածով:

11) ***Հրապարակայնություն և թափանցիկություն*** – բուհի գործունեության մասին տեղեկատվության հասանելիություն և մատչելիություն, բացառության ՀՀ օրենսդրությամբ և բուհի կանոնադրությամբ չնախատեսված դեպքերում:

12) ***Արդարություն և համաչափություն*** – օբյեկտիվ, անկողմնակալ և անաչառ մոտեցումների առաջադրում և կիրարկում, գործադրած քայլերի և ակնկալվող նպատակների հավասարակշռություն:

13) ***Հավասարություն*** – ակադեմիական հանրույթում խտրականության բացառում, ներառականություն, իրավահավասարություն անկախ տարիքից, սեռից,

14) **Confidentiality** - prohibition of the use of information available during the performance of official duties for non-official purposes, as a result of which damage may be caused to the life and health of the beneficiaries of the University, honor, dignity and good reputation and ranking of the University. Respect for the protection of one's personal data, privacy of personal and family life and other rights.

հաշմանդամությունից, ռասսայից, էթնիկ պատկանելիությունից, կրոնից և դավանանքից:

14) ***Խորհրդապահություն և գաղտնիություն*** – ծառայողական պարտականությունների իրականցման ընթացքում հասանելի տեղեկատվության օգտագործման արգելք ոչ ծառայողական նպատակներով, որի արդյունքում կարող է վնաս հասցվել Համալսարանի շահառուների կյանքին և առողջությանը, պատվին, արժանապատվությանը և բարի համբավին, Համալսարանի հեղինակությանը և վարկանիշին: Հարգանք մարդու անձնական տվյալների պաշտպանության, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության և այլ իրավունքների նկատմամբ:

## ՀԵՀ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

***ՀԵՀ սովորողները պարտավոր են.***

**1.1.** Բարձր պահել Համալսարանի վարկը և հեղինակությունը:

**1.2.** Բուհական միջավայրում և ակադեմիական հանրույթում դրսևորել կարգապահություն, զսպվածություն, բարեկրթություն:

**1.3.** Ուսումնառության և հետազոտական գործունեության ընթացքում չզբաղվել գրագողությամբ, խարդախությամբ, տվյալների կեղծմամբ և ակադեմիական ազնվության այլ խախտումներով:

**1.4.** Զարտուղի ճանապարհներով չփորձել ստանալ չնախատեսված արտոնություններ և գնահատականներ:

## ETHICS RULES OF EUA STUDENTS

**EUA students are obliged to:**

1.1. Uphold the credit and reputation of the University.

1.2. Demonstrate discipline, restraint, politeness in the University environment and in the academic community.

1.3. Not to engage in plagiarism, fraud, falsification of data and other violations of academic integrity during studies and research activities.

1.4. Not to try to get unintended privileges and evaluations in other ways.

1.5. Not to miss classes or be late for classes without a valid reason, and in the latter case, apologize for being late and obtain permission to attend class.

**1.5.** Առանց հարգելի պատճառի բաց չթողնել դասերը կամ ուշանալ դասերից, իսկ վերջինիս դեպքում՝ ներողություն խնդրել ուշացման համար և թույլտվություն վերցնել դասին մասնակցելու համար:

**1.6.** Չխաթարել դասապրոցեսի բնականոն ընթացքը, անհարկի չընդհատել դասախոսին և առանց թույլտվության չլքել լսարանը:

**1.7.** Ըմբռնումով վերաբերվել իրենց հանդեպ դրսևորած արդարացի դիտողություններին և նկատողություններին, առողջ քննադատություններին, շտկել դրանց հետևանքները:

**1.8.** Ուսումնառության ընթացքում նպաստել համընդհանուր հարգանքի և փոխըմբռնման մթնոլորտի հաստատմանը՝ արդարության, համերաշխության, հանդուրժողականության, իրավահավասարության և խտրականության բացառման սկզբունքներին համապատասխան:

**1.9.** Չոտնահարել և չնսեմացնել դիմացինի արժանապատվությունը, անհարկի և չարդարացված որակումներ և գնահատականներ չհնչեցնել միմյանց հասցեին:

**1.10.** Չզբաղվել ապակառուցողական քարոզչությամբ, վնասակար և հակաբարոյական արժեքների, ատելության և թշնամանքի տարածմամբ և սերմանմամբ:

**1.11.** Հարգել դասընկերների և ակադեմիական հանրույթի ներկայացուցիչների պատիվն ու արժանապատվությունը, նրանց կրոնական և քաղաքական հայացքները, անձնական առանձնահատկությունները:

**1.12.** Դասապրոցեսի ժամանակ չօգտվել հեռախոսից և այլ տեխնիկական և հաղորդակցության միջոցներից, չզբաղվել դասին չառնչվող կողմնակի աշխատանքներով:

1.6. Not to disrupt the normal course of the class, not to interrupt the lecturer unnecessarily and not to leave the classroom without permission.

1.7. Treat with understanding the fair remarks and criticisms shown to them, healthy criticisms, correct their consequences.

1.8. Contribute to the establishment of an atmosphere of universal respect and mutual understanding during studies in accordance with the principles of justice, solidarity, tolerance, equality and non-discrimination.

1.9. Not to trample and belittle the dignity of the other person, not to make unnecessary and unjustified qualifications and assessments towards each other.

1.10. Not to engage in destructive propaganda, spreading and instilling harmful and immoral values, hatred and enmity.

1.11. Respect the honor and dignity of classmates and representatives of the academic community, their religious and political views, personal characteristics.

1.12. Not to use the phone and other technical and communication means during the lesson, not to engage in side activities not related to the lesson.

1.13. Keep the University grounds and environment clean and unpolluted.

1.14. Dress neatly, excluding sports uniforms and sloppy or unnecessarily attention-grabbing clothing on campus.

1.15. Avoid colorful and flashy makeup, variety and abundance of jewelry and other accessories.

1.16. Not to use alcohol, tobacco, narcotics and psychotropic substances, not to engage in card games, to refrain from harmful habits

**1.13.** Չաղտոտել և մաքուր պահել Համալսարանի տարածքը և շրջակա միջավայրը:

**1.14.** Հագնվել կոկիկ՝ բացառելով սպորտային համազգեստով և անփույթ կամ անհարկի ուշադրություն գրավող հագուստով Համալսարան ներկայանալը:

**1.15.** Խուսափել գունազեղ և ճչացող շպարից, զարդերի և այլ աքսեսուարների բազմազանությունից և առատությունից:

**1.16.** Բուհում չօգտագործել ոգելից խմիչք, ծխախոտ, թմրամիջոցներ և հոգեմետ ներգործության միջոցներ, չզբաղվել թղթախաղով, զերծ մնալ վնասակար սովորություններից և հակումներից: Ծխել թույլատրվում է միայն դրա համար առանձնացված հատուկ տարածքներում:

**1.17.** Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով՝ այդ թվում սույն կանոնակարգով սահմանված նորմերի պահանջները:

and tendencies in the University. Smoking is allowed only in seperated areas.

1.17. Implement the requirements of the RA legislation, the University charter and internal legal acts, including the norms defined by this regulation.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Համալսասարանում դասաժամի տևողությունը հաշվարկվում է ակադեմիական ժամերով: Լսարանային բոլոր տեսակի պարապմունքների համար մեկ ակադեմիական ժամը 40 րոպե է: Պարապմունքների միջև դասամիջոցը՝ 10 րոպե է, իսկ երկար դասամիջոցը՝ 30 րոպե: Մուտքը և ելքը Համալսարանի շենք կատարվում է էլեկտրոնային հաշվառման համակարգի միջոցով՝ անցաքարտերի ներկայացմամբ: Համալսարանում ուսումնական ժամանակի մեկնարկը, ավարտը և տևողությունը սահմանվում է ըստ հետևյալ ժամանակացույցի.

## STUDY TIME

The duration of the class period at the University is calculated in academic hours. For all classroom classes, one academic hour is 40 minutes. The break between classes is 10 minutes, and the long break is 30 minutes. Entry and exit to the University building is done through the electronic registration system with the presentation of pass cards. The start, end and duration of study time at the University is defined according to the following schedule.

***Full-time learning of the BA degree program***

a) first hour: 9:30 - 10:50

***բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցում***
ա) առաջին ժամ՝ 9:30 - 10:50
բ) երկրորդ ժամ՝ 11:00 - 12:20
գ) երրորդ ժամ՝ 12:50 – 14:10
դ) չորրորդ ժամ՝ 14:20 – 15:40
***մագաստրոսի կրթական ծրագրի առկա ուսուցում***
ա) առաջին ժամ՝ 18:30 - 19:40
բ) երկրորդ ժամ՝ 19:50 - 21:00
***բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրի հեռակա ուսուցում***
ա) առաջին ժամ՝ 12:50 - 14:10
բ) երկրորդ ժամ՝ 14:10 - 15:40
գ) երրորդ ժամ՝ 15:40 – 17:10

b) second hour: 11:00 - 12:20
c) third hour: 12:50 - 14:10
d) fourth hour: 14:20 - 15:40

**Full-time learning of the MA degree program**
a) first hour: 18:30 - 19:40
b) second hour: 19:50 - 21:00

***Part-time learning of BA and MA degree programs***
a) first hour: 12:50 - 14:10
b) second hour: 14:10 - 15:40
c) third hour: 15:40 - 17:10

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Համալսարանի սովորողն իրավունք ունի.***

1.1. Ստանալու համապատասխան կրթական ծրագրով նախատեսված գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

1.2. Օգտվելու իր կարգավիճակից բխող ուսումնառության հնարավորություններից և արտոնություններից այդ թվում՝ ուսման վարձի լրիվ և մասնակի փոխհատուցում ստանալու, կրթաթոշակի և խրախուսական պարգևների արժանանալու, ակադեմիական արձակուրդ ձևակերպելու, Համալսարանից ազատվելու, կրթությունը դադարեցնելու, այլ կրթական հաստատություն տեղափոխվելու իրավունքներից՝ ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում:

1.3. ՀՀ օրենսդրության և Համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով մասնակցելու Համալսարանի

## RIGHTS AND DUTIES OF UNIVERSITY STUDENTS

***A university student has the right to:***

1.1. obtain the knowledge, abilities and skills provided by the relevant degree program.

1.2. Take advantage of the study opportunities and privileges arising from his/her status, including the right to receive full and partial reimbursement of tuition fees, to receive scholarships and incentive awards, to take an academic leave, to be dismissed from the University, to stop education, to transfer to another educational institution, in cases provided for by RA legislation and internal legal acts of the University.

1.3. Participate in the work of collegial management bodies of the University in accordance with the procedure established by RA legislation and internal legal acts of the University.

կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին:

1.4. Միավորվելու Համալսարանի ուսանողական խորհրդում, ուսանողական գիտական ընկերությունում և ուսանողական այլ կազմակերպություններում:

1.5. Մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները:

1.6. Մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործընթացների և գնահատել Համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի գործունեությունը,

1.7. Մասնակցելու ուսումնակրթական և գիտահետազոտական աշխատանքների, կրթամշակութային միջոցառումների, այդ թվում՝ գիտաժողովների, կոնֆերանսների, գիտակրթական քննարկումների, մարզական և մշակութային մրցույթների ու փառատոնների:

1.8. Անվճար օգտվելու Համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից:

1.9. Օգտվելու լրացուցիչ անվճար և վճարովի այլ կրթական ծառայություններից՝ ներառյալ եվրոպական կրթական կառույցներ մեկնելու, ուսուցանելու, ուսումնական պրակտիկա անցնելու Համալսարանի առաջարկած հնարավորություններից՝ Համալսարանի ներքին իրավական ակտերի և կնքած համաձայնագրերի հիման վրա:

1.10. Տվյալ ուսումնական տարվա ընթացքում երկու անգամ օգտվելու Համալսարանի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով հաստատված

1.4. Join the University's student council, student scientific society and other student organizations.

1.5. Participate in the formation of the content of his/her education, observing the requirements of the state educational standards of higher professional education.

1.6. Participate in the processes ensuring the quality of teaching and to evaluate the activities of the University's academic and administrative staff,

1.7. Participate in educational and scientific research works, educational and cultural events, including conferences, scientific and educational discussions, sports and cultural competitions and festivals.

1.8. Free use of the University's library, laboratories, information repositories, educational, scientific, medical and other services.

1.9. Take advantage of additional free and paid educational services, including the opportunities offered by the University to travel to European educational institutions, to learn, to do educational internships, based on the University's internal legal acts and signed agreements.

1.10. During a given academic year, use the vacation approved by the schedule of the organization of the University's educational process twice with a total duration of not less than seven weeks.

1.11. Familiarize yourself with the provisions of the University's charter and internal legal acts.

1.12. Appeal the orders and decisions related to his/her studies and status, in accordance with the RA legislation and internal legal acts of the University.

արձակուրդից ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ:
1.11. Ծանոթանալու Համալսարանի կանոնադրության և ներքին իրավական ակտերի դրույթներին:
1.12. Բողոքարկելու իր ուսումնառությանն ու կարգավիճակին առնչվող հրամաններն ու որոշումները՝ ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

***Համալսարանի սովորողը պարտավոր է.***
